ՀԱՆԳԻՍՏ

ԼԵՎՈՆ ՀԱԿՈԲԻ ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Անցնող տարվա վերջին կյանքից հեռացավ Արարատյան հայրապետական թեմի Թեմական խորհրդի ատենապետ Լևոն Հակոբի Կարամանուկյանը:

Ծնվել է 1918 թ. Հալեպում, իրավաբանի ընտանիքում: 1920-ական թվականներին երկրից տեղահանված տարագիր հայությունը Մերձավոր Արևելքի երկրներում կենտրոնացած էր տարբեր գաղթակայաններում, և հետեղեռնյան այս շրջանում ծնված սերնդին էր վիճակված անդուլ աշխատանքով ավարտել գաղթակայաններից ազգային-եկեղեցական ամուր կառույցներով հայկական համայնքների ստեղծման գործը:

Ազգային կրթությունը ստանալով Հալեպի Հայկազյան վարժարանում, Լևոն Կարամանուկյանը այնուհետև ուսանում է ֆրանսիական Freres Maristes քոլեջում՝ ստանալով «հանրօգուտ շինության կապալառու» մասնագիտության բակալավրի աստիճան: Ընդհանուր ճարտարագիտական-տեխնիկական կրթությունը Լևոն Կարամանուկյանին չի կտրում ազգային կյանքից: Երիտասարդական տարիներից եռանդուն կերպով արձագանքում է բոլոր այն հարցերին, որոնք հուզում էին գաղութի և ընդհանրապես Սփյուռքի հայությանը: 1944 թվականի վերջերին համախոհ մի խումբ ընկերներով հիմնադրում են «Հայրենաբաղձ հայերի միությունը»՝ հրատարակելով նաև «Դեպի երկիր» ամսաթերթը:

Երկրորդ աշխարհամարտի ծանր տարիներին աշխարհասփյուռ հայությունը կրկնակիորեն էր տագնապած՝ թե՛ մարդկության ապագայի և թե՛ վերապրող Հայաստանի ճակատագրի համար: Ահա այս պատճառով նա ևս մեծ ոգևորությամբ իր մասնակցությունն է

բերում «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հիմնադրամի ստեղծմանը և միջոցների հանգանակությանը, իսկ հաղթանակից հետո, 1946-48 թվականներին, լծվում է ներգաղթի կազմակերպման աշխատանքներին:

Մինչ հայրենիքում հաստատվելը, 1948-1965 թվականները, սիրիահայ գաղութում վարում է հասարակական, կրթական, երիտասարդական, կուսակցական և քաղաքական բազմազան աշխատանքներ՝ տարբեր տարիների դառնալով Հայ Մարմնակրթական Միության նախագահ, Ազգային ծերանոցի խնամակալության անդամ և շինարարության պատասխանատու, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության վարչության անդամ:

Լինելով Սիրիայի Արաբական Հանրապետությունից 1965 թվականի ներգաղթի երրորդ քարավանի ղեկավարը, գալով հայրենիք, հաստատվում է Լենինականում: 1967-ին տեղափոխվում է Երևան, ուր աշխատում է բնակարանների կոոպերատիվ շինարարության վարչությունում, այնուհետև՝ Երևանի քաղաքային խորհրդի արձանագրային բաժնում:

Հայաստանում մասնագիտական իր ունակությունները ծառայեցնելով հայրենիքի բարգավաճմանը, շարունակում է ազգային-հասարակական գործունեությունը: Մասնակցում է «Այնթապ» հայրենակցական միության ստեղծմանը: Միությունը Սփյուռքից նվիրատվություն ստացած հինգ հարյուր հազար ամերիկյան դոլլար արժողությամբ սարքավորումներով հիմնում է Այնթապի ժանյակե վարագույրների գործարանը:

Միաժամանակ, մասնագիտական բարձր պատրաստվածությունից բացի, նա ուներ գիտական լայն հետաքրքրություններ և տասնամյակների ընթացքում հարուստ գրադրան էր ստեղծել, որից արևելագիտական բնույթի շուրջ 400 գիրք է նվիրում Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի գրադարանին:

Լևոն Հակոբի Կարամանուկյանը Հայ Առաքելական Եկեղեցու նվիրյալ զավակն էր և ողջ կյանքն ապրել է հավատավոր քրիստոնյային վայել նկարագրով ու վարքով: 1970-ական թվականների սկզբից մինչև կյանքի վերջը նա Արարատյան հայրապետական թեմի Թեմական խորհրդի ատենապետն էր, և իր անմիջական մասնակցությամբ է ստեղծվել նաև թեմական կանոնադրությունը:

Լո՛ւյս և օրհնություն նրա արդար հիշատակին: